ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»
Փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80,
կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/3054-21 առ "19" 11 2021թ.
[ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21-01/051 պայմանագիրը
միակողմանի լուծելու վերաբերյալ]

«ՏԻԿԱՍՈՆ» ՍՊԸ-ի
տնօրեն Մ. Խաչատրյանին
ք. Երևան, Օրբելի 33Ա, բն.15

Հարգելի՛ պարոն Խաչատրյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար ռետինատեխնիկական պատրաստվածքների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ մարտի 3-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՏԻԿԱՍՈՆ» ՍՊԸ-ի միջև 2021թ. ապրիլի 12-ին կնքվել է №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21-01/051 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 2 970 000 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով:

Համաձայն պայմանագրի հավելված № 1-ի (Տեխնիկական բնութագիր–գնման ժամանակացույց) ռետինատեխնիկական պատրաստվածքների համար մատակարարման ժամկետ է սահմանվել պայմանագիրը կնքելու օրվանից 40 օրացուցային օր՝ մինչև 21.05.2021թ.:

Համաձայն Հարկային–հաշիվ ԱՆ№09512466830 առ 31.05.2021թ՝ «ՏԻԿԱՍՈՆ» ՍՊԸ-ի կողմից մատակարավել է Պայմանագրով սահմանված ժամկետում նախատեսված ռետինատեխնիկական պատրաստվածքների բոլոր հինգ չափաբաժինները:

Ապրանքի մուտքային ստուգման արդյունքում (ԱԿՏ № 05.21-114 առ 24.05.2021թ Մուտքային վերահսկողության) հայտնաբերվել և արձանագրվել է, որ Պայմանագրի №3 չափաբաժնով նախատեսված 80կգ թիթեղ ռետինե 1Н-1-МБС–С4-ի փոխարեն մատակարարվել է 75 կգ (39կգ և 36 կգ) ընդհանուր քաշով անորակ և պիտանելիության ժամկետանց 2Н-1-МБС–С4 ռետինե թիթեղ, որը հետ է վերադարձվել Ձեզ: Միաժամանակ Ձեզ առաջարկվել է, թույլատրելի ժամկետում, փոխարինել այն նոր և պիտանելի ռետինե թիթեղով:

Սույն թվականի նոյեմբերի 3-ին Ձեր կողմից մատակարված 80 կգ 1Н-1-МБС–С4 (Հարկային–հաշիվ ԱՆ№0319706374 առ 03.11.2021թ) ռետինե թիթեղը նույնպես չի համապատասխանում Պայմանագրով սահմանված տեխնիկական բնութագրին (ԱԿՏ № 11.21-386 առ 03.11.2021թ Մուտքային վերահսկողության), որի վերաբերյալ Ձեզ տեղեկացվել է:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն միակողմանի լուծում է «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «ՏԻԿԱՍՈՆ» ՍՊԸ-ի միջև 2021թ. ապրիլի 12-ին կնքված №ՀԱԷԿ-ԳՀԱՊՁԲ-33/21-01/051 պայմանագիրը և Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվի նաև Պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժերը և տուգանքները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն Որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 45-րդ կետի պահանջները:

Հարգանքով՝

Գլխավոր տնօրեն՝ **Է. Մարտիրոսյան**

Կազմեց՝
ԳԲ առաջատար մասնագետ՝
Ա. Գրիգորյան
Հեռ. 010-28-29-60, 33-08